ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ 30.05.2014թ.

30.05.2014 07:42

Հարգելի փաստաբաններ,
ՀՀ ընտրական օրենսգրքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներից երեքը նշանակվում են Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի, երկուսը' Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահի, երկուսը' Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի առաջարկությամբ: Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի առաջարկությամբ նշանակված երկուական անդամները պետք է լինեն տարբեր սեռի ներկայացուցիչներ, և այդ երկուական անդամներից առնվազն մեկը պետք է ունենա իրավաբանական կրթություն կամ իրավունքի ոլորտում գիտական աստիճան:
ՀՀ փաստաբանների պալատի նախորդ նախագահ Ռուբեն Սահակյանի կողմից 2011թ. ներկայացվել էր հետևյալ երկու անդամների թեկնածությունը՝ փաստաբան Գեորգի Մարտիրոսյանի և քաղաքացի Սիլվա Մարկոսյանի:
Նկատի ունենալով այն, որ արական սեռի ներկայացուցչի (փաստաբան Գ.Մարտիրոսյանի) լիազորության ժամկետն ավարտվում է, անհրաժեշտություն է առաջացել ներկայացնել նոր թեկնածություն:
Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը նախատեսում է Հայաստանի Հանրապետության Նախագահին առաջարկել ՀՀ ԿԸՀ անդամի՝ արական սեռի փաստաբանի թեկնածություն: Երկու և ավելի թեկնածուների ինքնաառաջադրման դեպքում, ՀՀ փաստաբանների պալատի նախագահն իր որոշումը կայացնելու է՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի առաջարկության հիման վրա:
Արական սեռի փաստաբանները (այդ թվում՝ կասեցված արտոնագրով փաստաբանները), կարող են իրենց թեկնածությունը ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատ 2014թ. մայիսի 30-ից մինչև 2014թ. հունիսի 10-ը (ներառյալ):
Հիշեցնում ենք, որ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ կարող է լինել ընտրական իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը հրապարակային հասարակական-քաղաքական գործունեություն չի ծավալում և ունի'

1) բարձրագույն իրավաբանական կրթություն և վերջին 5 տարում առնվազն 3 տարվա մասնագիտական ստաժ,
2) իրավունքի ոլորտում գիտական աստիճան և վերջին 5 տարում առնվազն 3 տարվա մասնագիտական ստաժ,
3) բարձրագույն կրթություն և վերջին 10 տարում պետական մարմիններում առնվազն 5 տարվա հանրային ծառայության աշխատանքային ստաժ կամ
4) բարձրագույն կրթություն և վերջին 5 տարում մշտապես գործող ընտրական հանձնաժողովում 3 տարվա աշխատանքային փորձ կամ հանձնաժողովի աշխատակազմում առնվազն 3 տարվա աշխատանքային ստաժ:

ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավար՝
Մանե Կարապետյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })